# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ Գ ՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՆԴԱՄՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ, ՈՐ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Ռուսաստանի Հայերի Միութեան արտահերթ համագումարի առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթութիւններն ենք յղում Միութեան նախագահ Տիար Արա Աբրահամեանին, նուիրեալ բոլոր անդամներին, Դաշնային Ռուսաստանում բնակուող հարազատ մեր ժողովրդի բոլոր զաւակներին եւ համագումարի պատուարժան մասնակիցներին:

Սիրելի զաւակներ մեր Մայր Եկեղեցւոյ, Ձեր յաջողութիւնները Ռուսիոյ օրհնեալ հողում անկեղծ ուրախութեամբ են համակում Հայրապետիս հոգին: Ձեր ստեղծագործ կեանքն ու շինարար գործերը բարի համբաւ են բերում Ձեր անձերին եւ յաւելում ռուս ժողովրդի յարգանքն ու վստահութիւնը՝ հանդէպ հայ գաղութը՝ նպաստելով երկու ժողովուրդների եղբայրութեան ամրապնդմանը:

Ռուսաստանի Դաշնութիւն կատարած Մեր բազմաթիւ այցերի ընթացքին, ինչպէս նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով Մենք մշտապէս հաճելի առիթներ ենք ունեցել խաղորդ դառնալու Ռուսաստանի Հայերի Միութեան հայրենաշէն շնորհակալ գործունէութեանը: Մենք համոզուել ենք, որ Միութեան շուրջ հաւաքուած հայորդիները ամենայն պատրաստակամութեամբ իրենց հոգեւոր, մտաւոր ու նիւթական կարողութիւնները ի սպաս են դնում՝ առաւել արդիւնաշատ ծառայելու բարեպաշտ մեր ժողովրդին, ամրապնդելու Ռուսաստանի հայկական համայնքները, նպաստելու իր նոր կեանքը կերտող մեր Հայրենիքի առաջընթացին:

Մեզ հատկապէս գոհունակութիւն է պարգեւում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի եւ Ռուսաստանի Հայերի Միութեան ջերմ ու անկեղծ համագործակցութիւնը, որի բարի արդիւնքները ծառայում են Ռուսաստանում բնակուող հայորդիների ազգային-եկեղեցական կեանքը զօրացնելու ազնիւ նպատակին: Փառք Բարձրեալին, որ Ռուսաստանի լայնարձակ հողում բնակութիւն հաստատած հայու-

թիւնը ապրում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ հայրենեաց աւանդներին հաւատարիմ կեանքով՝ զօրեղ քրիստոնէական իր հաւատով, Աւետարանի պատգամների եւ ազգային ու եկեղեցական սրբազան աւանդոյթների կենսագործումով: Վստահ ենք, որ ռուսահայոց աննուազ նախանձախնդրութիւնը հանդէպ մեր հոգեւոր եւ ազգային արժէքները շարունակ արգասաւորուելու են ազգաշէն ու եկեղեցանուէր նորանոր ձեռքբերումներով:

Բարձրեալի օրհնութիւնն ենք հայցում Ձեզ եւ յաջողութիւններ մաղթում համագումարի աշխատանքներին: Մեր գնահատանքն ու խորը գոհունակութիւնն ենք յայտնում Ռուսաստանի Հայերի Միութեան կողմից Մեզ շնորհուած բարձրագոյն պարգեւի՝ առաջին աստիճանի ոսկեայ շքանշանի համար՝ որպէս Միութեան որդիական սիրոյ արտայայտութիւն հանդէպ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Առ Աստուած աղօթքով մաղթում ենք, որ Բարձրեալ Տէրը խաղաղ երկնքի ներքոյ անշրջելի առաջընթաց ու բարգաւաճում պարգեւի՝ Ձեզ համար երկրորդ հայրենիք դարձած Ռուսիոյ աւանդաշատ երկրին ու աստուածասէր ժողովրդին, հանապազ օրհնութեամբ միշտ ամուր պահի մեր ժողովուրդների եղբայրութիւնը եւ զօրաւոր Իր Աջով մշտապէս օգնական ու աջակից լինի բոլոր հայորդիներին ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

*«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանն. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Մարտի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 246